**Ուղեցույց դեպի այլ երկրներ հաշվեհամարով փոխանցումներ ֆիզիկական անձանց համար**

Արժույթներ: ՌԴ ռուբլի, ՀՀ դրամ

| Դաշտ | Պարտադիր / ոչ պարտադիր | Մեկնաբանություններ |
|---|---|---|
| Հաշիվ | Պարտադիր լրացման դաշտ | Հաճախորդը ընտրում է հաշիվը, որից պետք է կատարվի փոխանցումը: Փոխանցման հաշվի արժույթը պետք է համընկնի փոխանցման արժույթի հետ: Եթե հաճախորդը չունի հաշիվ փոխանցման արժույթով, պետք է մոտենալ մասնաճյուղ նոր հաշիվ բացելու համար: |
| Ստացող | Ոչ պարտադիր լրացման դաշտ | Ընտրել<br>- Պահպանված (նախկինում պահպանված ստացողի տվյալները ավտոմատ կերպով լրացվում են)<br>- Նոր |
| Ստացողի անվանում | Պարտադիր լրացման դաշտ | Հաճախորդը լրացնում է ստացողի անվանումը: ՌԴ ռուբլով փոխանցման դեպքում լրացվում է ռուսերեն տառերով, իսկ այլ արժույթով փոխանցման դեպքում՝ լատինատառ: |
| Ստացողի հաշիվ / IBAN | Պարտադիր լրացման դաշտ | Ստացողի հաշիվը պետք է պարունակի միայն թվեր՝ 20 նիշ: IBAN լրացնելու դեպքում սիմվոլների քանակի սահմանափակում չկա: |
| Ստացող բանկի SWIFT/ BIC կոդ | Պարտադիր լրացման դաշտ | ՌԴ ռուբլով փոխանցումների դեպքում լրացվում է ստացող բանկի BIC կոդը. Այլ արժույթներով փոխանցման դեպքում լրացվում է SWIFT կոդը. |
| Միջնորդ բանկի SWIFT/ BIC կոդ | Ոչ պարտադիր լրացման դաշտ | ՌԴ ռուբլով փոխանցումների դեպքում լրացվում է ստացող բանկի BIC կոդը. Այլ արժույթներով փոխանցման դեպքում լրացվում է SWIFT կոդը. Դաշտը լրացված լինելու դեպքում պարտադիր է լրացնել ստացող բանկի թղթակցային հաշիվը միջնորդ բանկում: |
| Ստացողի տիպ | Պարտադիր լրացման դաշտ | Ընտրել ցանկից<br>- Ֆիզիկական անձ<br>- Իրավաբանական անձ |
| Ռեզիդենտություն | Պարտադիր լրացման դաշտ | Ընտրել ցանկից<br>- Ռեզիդենտ<br>- Ոչ ռեզիդենտ |
| Վճարման նպատակ | Պարտադիր լրացման դաշտ | Ընտրել ցանկից<br>- Ոչ առևտրային<br>- Առևտրային<br>- Սեփական հաշվին |

| | | |
|---|---|---|
| ՀՎՀՀ | Ոչ պարտադիր լրացման դաշտ | Եթե ստացողի տիպը նշված է «ֆիզիկական անձ», ապա դաշտը ոչ պարտադիր է: Եթե ստացողի տիպը նշված է «իրավաբանական անձ», ապա դաշտը պարտադիր է: Դաշտում թույլատրելի է 10 կամ 12 թվային սիմվոլ: |
| ԿՊՊ | Ոչ պարտադիր լրացման դաշտ | Դաշտում թույլատրելի են միայն թվային սիմվոլներ: |
| Գումար | Պարտադիր լրացման դաշտ | Գումարը պետք է լինի փոխանցման հաշվի արժույթին համապատասխան: |
| Միջնորդավճարի տիպ | Պարտադիր լրացման դաշտ | Ընտրել ցանկից<br>- OUR - Ուղարկողը կրում է բանկի և թղթակից բանկի ծախսերը<br>- BEN - Ուղարկողը կրում է բանկի ծախսը: Մնացած ծախսերը գանձվում են ուղարկվող գումարից |
| Միջնորդավճարի հաշիվ | Պարտադիր լրացման դաշտ | Հաճախորդը ընտրում է միջնորդավճարի գանձման հաշիվը: Միջնորդավճարը գանձվում է ՀՀ դրամով: |
| Նպատակ | Պարտադիր լրացման դաշտ | Հաճախորդը լրացնում է փոխանցման նպատակը: |
| VO կոդ | Պարտադիր լրացման դաշտ | ՌԴ ռուբլով փոխանցումների դեպքում դաշտը պարտադիր է: Արժութային գործարքի չեզոք կոդ է համարվում 99090. |